

2015թ. Մարզի հողօգտագործողներին, համաձայն ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով 2015 թվականին հատկացվել է 800 տոննա աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու, որը բաշխվել է 53 համայնքների 796 շահառուի 2016թ. Հետ վերադարձման պայմանով: 2015թ. ֆերմերային տնտեսություններին և համայնքներին նախատեսվել և շուկայականից էժան գներով հատկացվել է 1500000 լիտր և փաստացի բաշխվել է 112646 լ դիզվառելիք, որը բաշխվել է 26 համայնքների 241 շահառուների, 2200տ ազդտական պարարտանյութ, որը բաշխվել է 78 համայնքների 3066 շահառուների, 80տ. Ֆոսֆորական, որից մարզ է ներկրվել՝ 10 տոննա, որը բաշխվել է 3 համայնքների 10 շահառուների, 20 տ. կալիումական, որից մարզ է ներկրվել 16 տոննա, որը բաշխվել է 8 համայնքների 26 շահառուների 250 տոննա գարնանացան գարու, որից մարզ է ներկրվել 193 տոննա, որը բաշխվել է 47 համայնքների 210 շահառուների, 2 տոննա առվույտի, որից մարզ է ներկրվել 1.85 տոննա, որը բաշխվել է 12 համայնքների 12 շահառուների և 40 տոննա կորնգանի, որից մարզ է ներկրվել 38.5 տոննա սերմացու, որը բաշխվել է 26 համայնքների 80 շահառուների: ՍԱՄ-ի միջոցով տեղական համայնքների ֆերմերներին տրամադրվել են աշնանացան ցորենի 570 տոննա սերմացու: Մկնանման կրծողների դեմ պայքարի կազմակերպման նպատակով 305 կգ թունանյութ /Ռոդիֆակում Ս/, որի միջոցով 27 համայնքներում պայքար է կազմակերպվել 10040 հա ցանքատարածությունների վրա: